«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Սեդա Հարությունյան

Ուսումնական հաստատություն՝ Հ. 45 հիմնական դպրոց

Երևան 2022

Թեմա՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Ենթահարցեր՝

1. Ի՞նչ է հայրենասիրությունը:
2. Ինչպե՞ս է դրսևորվում հայրենասիրությունը էպոսի հերոսների մոտ և մեր օրերում:

Ներածություն

Ժողովուրդը ոչ միայն նյութական բոլոր արժեքներն ստեղծող ուժ է, այլև նրա հոգևոր արժեքների միակ ու անսպառ աղբյուրն է, առաջին փիլիսոփան ու բանաստեղծը: Յուրաքանչյուր ժողովուրդ հենց իր սեփական բանավոր ստեղծագործություններով է կերտում իր անմահության հուշարձանները: Մարդկային ամեն մի նոր սերունդ մեծ չափով օգտվում է նախորդ սերունդների կողմից ստեղծված հոգևոր ու նյութական արժեքներից:

«Սասունցի Դավիթ» էպոսը հայ ժողովրդի արհավիրքներով լի կյանքի պատմությունն է, նրա կենսահայեցողության ու փիլիսոփայության հավերժ կենդանի գիրքը, մատյան հերոսությանը:

Էպոսը հայելի է, որի մեջ հստակ երևում է տվյալ ժողովրդի հոգու պատկերը: Մեր էպոսում մարմնավորվել են հայ ժողովրդի պատմության ամենահերոսական էջերը, նրա մաքառումներն ու վսեմ գաղափարները: Հովհաննես Թումանյանը գրում է. «Էպոսը մեր ազգային հոգևոր մեծագույն հարստությունն է, որի մեջ արտահայտվում են ժողովրդի նվիրական խոհերն ու երազանքները, մեր դարավոր պայքարը հանուն ազատության, մեր ազգային կենցաղը, մեր բնավորությունը, մեր ոճն ու ոգին: Այս վեպը գրվել է հազար տարի շարունակ: Ժողավուրդը բերնեբերան այն պատմել է և հորինել, հարմարեցրել նոր ժամանակներին, հարստացրել նոր դրվագներով ու գաղափարներով: «Սասունցի Դավիթ» -ը դարձել է ժողովրդական հանճարի մի անգերազանցելի մարմնացում»: Դյուցազնավեպում իշխող անկեղծության, ներքին

մաքրության և դեպի հայրենիքը, աշխատանքն ու աշխատավոր մարդը ունեցած բուռն սիրո հրաշալի հատկությունները՝ որպես ժողովրդի բարոյական վսեմ սկզբունքներ, դարերի շղթայի միջով հասել են մեր օրերը:

Ժողովուրդը սեփական հոգու բարեմասնություններն ու խիզախումները մարմնավորում է իր իդեալ-հերոսի մեջ: Հերոսը դառնում է հավերժական կենդանի այն հուշարձանը, որի արարքների, որի մարդկայնորեն բաբախող սրտի վրա ժողովուրդը անեղծանելի և հրե տառերով քանդակում է բարու և գեղեցիկի իր գաղափարները, վաղվա լավ օրվա իր երազանքները ու բարոյական վսեմ սկզբունքները:

«Սասունցի Դավիթ» էպոսը դարձել է մի ընդարձակ հանրագիտարան հայ ժողովրդական կյանքի, հավատի ու բարքերի, հոգեբանության ու աշխարհազգացողության:

Հայկական էպոսում կերպարների հիմքում ընկած են բարոյական, քաղաքական-իրավական պատկերացումները մարդկայինի, բարու ու չարի, յուրայինի ու օտարի, պարտքի և պատասխանատվության, պետության, իշխանության, ազգի ու հայրենիքի մասին: Էպոսում հայը իրականությունը դիտում է ազգային, համամարդկային բարոյականության դիրքերից և բարոյական հասկացություններով /պարտք, ազնվություն, պատասխանատվություն, արդարություն, մաքրություն, խիղճ, ամոթ և այլն/ ,սրանցով է գնահատում մարդկային վարքը:

Մեր էպոսի գաղափարը ժողովրդի մաքառումն է թշնամիների դեմ՝ հանուն ազատության, անկախության, պետականության: Էպոսում իրացվող գաղափարներն արդիական են, քանի որ ժողովուրդը միշտ ձգտում է ազատության, դժգոհում է անարդարությունից և փափագում ունենալ արդար ու անկախ իշխանություն:

Պետության ղեկավարը պետք է լինի ազնիվ, արդար, նվիրված իր ժողովրդին, ապրի ժո- ղովրդի ցավով, օգնի ու պաշտպանի: Այդպիսին են եղել էպոսի գլխավոր կերպարները: Նրանք առաջնահերթ մտածել են հասարակ ժողովրդի մասին, կառուցել տներ, պաշտպանել օտարից, ծաղկեցրել երկիրը:

«Սասունցի Դավիթ» էպոսը կա ու կմնա արդիական: Էպոսը այսօր էլ մեզ ու աշխարհին սովորեցնում է հայրենասիրություն, հավատարմություն, ազգային արժեքների գնահատում և պահպանում:

Մեր հրաշալի էպոսը մարդկության ստեղծած ամենահանճարեղ գեղարվեստական գործերից է: Նրա մեջ ամփոփված գաղափարները կենսունակ են այսօր և հետագայում էլ կուղղորդեն մեր ժողովրդին դեպի կատարելություն: Մատաղ սերունդն էլ, բացահայտելով էպոսի գաղափարական բովանդակության հիմնահարցերը, կունենա տեսլական՝ ինչպիսի՞ն դառնալ, դեպի ու՞ր շարժվել:

Երիտասարդությունն օդի պես կարիք ունի՝ սնվելու մեր ժողովրդական բանահյուսությամբ, մեր դասական գրականությամբ ու արվեստով:

Բովանդակություն

Հայ ժողովրդի հանճարը դարերի ընթացքում երկնել է այնպիսի մի բացառիկ ստեղծագործություն, ինչպիսին «Սասնա ծռեր» դյուցազներգությունն է: «Սասնա ծռեր»-ը Միավորված ազգերի կազմակերպության գիտության և մշակույթի հանձնաժողովի /ՅՈՒՆԵՍԿՕ/ կողմից ճանաչվել է համամարդկային մշակութային արժեք:

Էպոսի մասին արձագանքները պահպանվել են պորտուգալացի ճանապարհորդի գրառումներում դեռևս 16-րդ դարում: Հայտնի են բազում պատումներ: Բանահավաք Գարեգին Սրվանձտյանը առաջին անգամ գրի առավ և հրատարակեց «Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ» վերնագրով 1874թ.: Մ. Աբեղյանի գրառումը «Դավիթ և Միհր» վերնագրով լույս է տեսել 1889 թվականին:

1939 թ. «Սասնա ծռեր» դյուցազներգության 1000-ամյակի կապակցությամբ մինչ այդ գրի առնված 60 պատումներից ստեղծվում է համահավաք, միասնական, ամբողջական բնագիրը՝ «Սասունցի Դավիթ» վերնագրով: Այն իրականացնում են Մ. Աբեղյանը, Գևորգ Աբովը և Արամ Ղանալանյանը: Խմբագիրն էր Հովսեփ Օրբելին: «Սասունցի Դավիթ» դյուցազներգությունը մի հոյակապ կոթող է, ուր արտացոլվել է հայ ժողովրդի դարավոր պայքարը արաբական խալիֆաթի դեմ 9-10-րդ դարերում:

Էպոսը կոչվում է «Սասնա ծռեր»: «Ծուռ» բառը հայերենում ունի մի քանի նշանակություն՝ դիվահար, խենթավուն, խելահեղ քաջ, և իմաստային այս տարբերակներից յուրաքանչյուրը էպոսի հերոսների համար բնորոշ է նրանց կյանքի այս կամ այն պարագայում: Էպոսն անվանում են նաև «Ձոջանց տուն», այսինքն՝ «Մեծերի տուն», «Ավագների տուն», «Հսկաների տուն»:

Էպոսում չորս սերնդի պատկանող հերոսները, միմյանց լրացնելով, միասին մի ամբողջություն կազմելով, արտացոլել են իրենց կերպարներն ստեղծող ժողովրդի պատկերացումները, նրա լավագույն երազանքներն ու ակնկալությունները:

Այդ կերպարների մեջ ժողովուրդը մարմնավորել է նաև այն մարդկանց ընդհանուր հայացքները, ովքեր պատերազմ չեն հրահրում, բայց ստիպված են կռվել, ովքեր չեն ուզում հեղել ոչ՛ իրենց, ոչ՛ էլ այլոց արյունը՝ ի հեճուկս իշխելու տենդով բռնված զավթիչների: Այդ հայացքները խարսխված են այն դարավոր փորձի վրա, որ ժողովուրդը ձեռք է բերել կործանարար պատերազմների, ասպատակությունների, արյունահեղ կոտորածների, օտար նվաճողների և սեփական թագավորների լծի ներքո կրած տառապանքների բովում: Ազատագրական պայքարը ծագել է Սասունում, հետո տարածվել ողջ Հայաստանում:

Դյուցազներգությունը բաղկացած է չորս ճյուղից, որոնցից յուրաքանչյուրը սասունցի դյուցազունների մեկ սերնդի պատմությունն է՝ իր հերոսի քաջագործություններով, որի անունն էլ կրում է տվյալ ճյուղը: Սա Սասնա տան չորս սերնդի հերոսների

պատմությունն է, հերոսներ, որոնք լրացնում են մեկը մյուսին և շարունակում միմյանց: Էպոսի մեջ մարմնավորված են աշխատավոր ժողովրդի բարոյական սկզբունքները, առանձնապես հայրենասիրությունն ու ժողովուրդների բարեկամությունը:

Իսկ ի՞նչ է հայրենասիրությունը:

Հայրենասիրական զգացմունքները և գաղափարները ձևավորվել են ազատության ու երջանկության համար ժողովուրդների և նրա լավագույն զավակների մղած պայքարում: Իսկական հայրենասիրությունը նվիրվածություն է իր ժողովրդին և հարգանք դեպի մյուս ժողովուրդները:

Էպոսի հայրենասիրությունը համազգային է, քանի որ թշնամին գալիս է ոչ միայն շահագործելու, հարկ տանելու, այլև ոչնչացնելու ժողովրդին, կործանելու երկիրն այնպես , որ «Ալ Սասուն անուն չեղնի աշխըրքի մեջ»:

Էպոսի առաջին ճյուղը, որը կոչվում է «Սանասար և Բաղդասար», ներկայացնում է սասունցիների տոհմի հիմնադրման պատմությունը: Այս ճյուղում Բաղդադի խալիֆը բռնությամբ ամուսնանում է Հայաստանի Գադիկ թագավորի դստեր՝ Ծովինարի հետ, որ մինչ Բաղդադ մեկնելը շրջում է հայրենի երկրում և ժայռից բխած աղբյուրից մի բուռ լիքը և մի բուռ կիսատ ջուր է խմում և հղիանում: Հետագայում օտար երկրում ծնում է 2 որդի: Մեծի անունը դնում են Սանասար, փոքրինը՝ Բաղդասար: Օտար երկրում մեծանալով՝ եղբայրները սպանում են խալիֆին և իրենց մորը առած՝ հեռանում են Բաղդադից դեպի Հայաստան ու բարձրաբերձ լեռներում հիմնում մի անառիկ բերդ՝ Սասունը: Ծովինարի ինքնակամ հանձնվելը թշնամուն հերոսական արարք է. մտածում է զոհվել, քան պատճառ դառնալ հայ ժողովրդի ոչնչացմանը. «Իս մեկ ջան իմ, էրթամ կուրսվեմ աղեկի, քանց իմ խոր երկիր ավերի: Նա թեև պասիվ, բայց կռվում է: Հայ կնոջը հատուկ են անձնազոհությունը, հայրենասիրությունը:

Երբ Սանասարը և Բաղդասարը ազատում են Ծովինարին, նրանք, ըստ էության, ազատագրում են հափշտակված մայր հայրենիքը, որը հետո դառնում է Սասնա անառիկ բերդ: Նրանք մտահոգված են իրենց տան անառիկությամբ և գալիք սերնդի հզորությամբ, քանի որ փորձը համոզել էր , որ զավթիչների շրջապատում ազատ ու անկախ կարող է ապրել այն ժողովուրդը միայն, որը հզոր է:

Ծովինարը բարձր հոգեկան ուժի տեր կնոջ հոյակապ կերպար է, ազգային հերոսուհու փառավոր կերպար է, որն իր մեջ խտացնում է ինքնագոյության համար մաքառող, ազատության ձգտող ժողովրդի դարավոր ակնկալությունը:

Սանասարը և Բաղդասարը աստվածաշնչական և առասպելական տարրերի խառնուրդով դիցաբանական կերպարներ են, որոնց սնուցող ուժի աղբյուր է դարձել ջուրը, որը դառնում է կյանքի աղբյուրը: Ձրից են սերում և՛ Ծովինարը, և՛ նրա երկու զավակները: Ծովինար նշանակում է ծովից ծնված: Սանասարը կապված է բնության տարրերի հետ, նրան կնքում են թոնրի վրա, որտեղից և ստանում է կրակային ոգին, ծովի հատակից՝ Թուր Կեծակին և Քուռկիկ Ձալալին, որը խոսում է մարդկային լեզվով և թռչում դեպի արևը: Նրանց կառուցած տունը հայոց տունն է, հայի հայրենիքը, որին ժողովուրդը տենչում է տեսնել հզոր ու անկախ: Միայն հարկահանությունից և ճնշումներից հոգնած ժողովուրդը կարող էր ստեղծել Սասուն քաղաքի հիմնադրման հիասքանչ զրույցը, քաղաք, որտեղ Սանասարը և Բաղդասարը ժողովրդից հարկեր չեն վերցնում, մարդկանց չեն շահագործում:

Երկրորդ ճյուղում , որը կոչվում է «Մեծ կամ Առյուծաձև Միհր», պատմվում է Միհրի ուժի և քաջության մասին, որը ժառանգել է իր հորից՝ Սանասարից. մինչդեռ նրա մյուս երկու զավակները՝ Ձենով Հովհանը և Վերգոն, մարդկային թուլություններով օժտված պարզ մահկանացուներ են: Մեծ Միհրը 15 տարեկան հասակում սպանում է ամեհի առյուծին՝ սասունցիներին ազատելով սովից, կռվում Սպիտակ Դևի դեմ, փրկում գեղեցկուհի Արմաղանին և ամուսնանում նրա հետ, որից ծնվում է Դավիթը՝ նրանց միակ որդին: Բոլոր հերոսները ուժ են ստանում Կաթնաղբյուրի ջրից: Սակայն նրանցից յուրաքանչյուրը խիստ անհատական կերպար է՝ հերոսության, քաջության, ուժի յուրահատուկ մարմնավորում: Նա խորհրդանշում է արևն ու լույսը: Միհրի հայրենասիրությունը յուրովի է արտահայտվում էպոսում: Յոթ տարի Մըսրում մնալուց հետո պատահմամբ իմանում է Իսմիլ Խաթունի՝ հզոր ժառանգ ունենալու մտադրությունը և նվաճողական տենչը: Օտարին զորեղացնելու, սեփական օջախը, հայրենիքը վտանգի ենթարկելու գաղափարը անչափ ծանր է մեծ հայրենասերի համար: Եվ ահա Սասնա «ճրագը» վառ պահելու հույսը սրտում՝ նա վերադառնում է Մըսրից: Հայրենիքի ապագան հառնում է դյուցազունի առաջ: Միհրի առջև դրված է իրենց այսօրը և հայրենիքի վաղվա հզորությունը:

Նա իր այսօրվա արարքի մեջ իր ժողովրդի ապագա փրկությունն է տեսնում: Եթե իր մահը կյանք ու հզորություն է ծնում ընդհանուրի համար, նա պատրաստ է իր կյանքը տալու.

Բալքի մ, Աստված մի ճրագ կպուցու,

Մեկ տղա ըլնը՛, մե Խայու ճրագ կպնը՛:

Միերը հաստատ գիտի, որ եթե տղան լույս աշխարհ գա, կմեռնեն ինքն էլ, Արմաղանն էլ, բայց այդ բանը նրանց չի սարսափեցնում: Սեփական կյանքի կորուստը դեռ կորուստ չէ ժողովրդի, ավելին, այդ այնպիսի կորուստ է, որ կյանք է ծնում, ապրելու ու հզոր մնալու հավատ:

Միերն ու Արմաղանն էլ մեռնում են՝ հանուն անմահության, հանուն նորի, հանուն գեղեցիկի:

Այստեղ Միերի հայրենասիրությունը սահման չունի. իր հայրենիքը չկորցնելու, հաստատ ու հզոր պահելու համար է մեռնում: Միերը արևի նման մայր է մտնում, որ նորից ծագի և արևի նման անմահ է մնում: Նրա հերոսությունը նպատակ ունի: Մեռնել, որպեսզի կենդանի մնա հայրենիքը: Միերի մահը «իմացյալ» մահ է, կյանքը հաստատող բարոյական վսեմ արարք: Միերի կողմից հաղթված մահի մեջ ժողովուրդը մարմնավորել է իր անմահության գաղափարը: Իսկ ժողովուրդը նրա մահից հետո մեծ ակնածանքով սգում է նրա կորուստը՝ յոթ տարի սուգ կապելով: Սա էլ ազգային սուգն է:

Մի՞թե սա հայրենասիրության բարձրագույն դրսևորում չէ:

Էպոսի երրորդ ճյուղը կոչվում է Դավթի անունով: Սա ամենաամբողջական ճյուղն է, քանի որ ավելի մանրամասն է պատմում իր հերոսի մանկության, պատանեկության, կռիվների ու Սասունի կյանքի մասին: Ծնողներից որբացած Դավիթը ապրում է Մըսրում, սնվում Սասունից բերված յուղ ու մեղրով: Նա մեծանում է օրեցօր, ժամ առ ժամ, Կաթնաղբյուրից ստանում անպարտելի ուժ: Նրա եղբայրը Մըսրա Մելիքն է, որը ծնվել է Իսմիլ Խաթունից՝ ժառանգելով նենգություն ու տիրելու կիրք: Դավիթը գալիս է Սասուն, ազատագրում Ծովասարում Մելիքի կողմից արգելափակված կենդանիներին և վերակառուցում Մարութա վանքը: Դավթի ճյուղը ամբողջ դյուցազնավեպի կենտրոնն է: Դավիթն իր ժողովրդի սիրով ջերմացած հերոս է:

Հայրենասիրության աղբյուր է համարվում հայրենի երկիրը, այն վայրը, որտեղ ծնվել ու մեծացել է մարդը: Հայրենի բնությունը՝ անտառները, հովիտները, լեռները, գետերը և այլն, ներկայացնում են հայրենիքի նկատմամբ տածած սիրո ձևավորման կարևոր նախադրյալ: Դավիթը կռվի է գնում, որ հայրենի լեռների, աղբյուրների գեղեցկությունը անեղծ մնա թշնամու մահաբեր շնչից.

Ծովասարու պաղ – պաղ ախպրներ,

Մնացե՛ք բարո՜վ, բար՜ի մնացեք:

Ես կ՚երթամ կռիվ, կը ծարվնամ,

Տուք կարո՜տ մնացեք:

Բարոյականը և գեղեցիկը Դավթի վարմունքի մեջ համընկնում են:

Դավթի՝ հայրենիքի նկատմամբ ունեցած սերը բխում է դեպի մարդկությունն ունեցած սիրուց: Նա կռվում է ոչ միայն իր ժողովրդի իրավունքն ու պատիվը պաշտպանելու, Սասունը ստրկացնող ձեռքից ազատ պահելու համար, այլև ազատագրում է բռնակալի լծի տակ հեծող ժողովրդին: Սա բարձր տիպի հայրենասիրություն է, ժողովուրդների բարեկամությունն իր մեջ ներառող համամարդկային զգացմունք: Նա չի ստրկացնում այլ ժողովուրդների: Պարտված բանակից հարկ չի վերցնում, այլ անգամ ազատ է արձակում: Բանակին հետ է ուղարկում՝ պատվիրելով զբաղվել խաղաղ , ստեղծագործ աշխատանքով: Մելիքների կողմից դարերով թալանված, բաժան-բաժան արված ժողովուրդը երազել է միասնություն, միասնական պայքար ու փիլիսոփայել. «գեղ կանգնի, գերան կկոտրի»: Դրան հակառակ՝ օտար զավթիչներն էլ ունեցել են իրենց ոչ բարի, ազգակործան, անմարդկային սկզբունքը՝ «բաժանիր, որ տիրես»:

Դավիթը առաքինի է, համարձակ, խիզախ, հայրենասեր, հոգու խորքից հուզվող: Ժողովուրդն իր բարոյական գաղափարներն է ամփոփել Դավթի մեջ, նա ատում է թշնամիներին, բայց ստոր միջոցներ չի կիրառում նրանց հաղթելու համար: Նրա մեծահոգության ու վստահության անխախտ հիմքը հաղթանակի հավատն է, որը բխում է հայրենիքի պաշտպանության արդար գործի գիտակցումից: Նա հանկարծակի չի հարձակվում թշնամու վրա, ստեղծում է հավասար պայմաններ: Նա գնում է մարտի, դա արդարության զայրագին կռիվն է անարդարության դեմ, ժողովրդի կռիվը՝ բռնակալության դեմ:

Ով քնած է՝ արթուն կացեք,

Ով արթուն է՝ ձիե՛ր թամբեք,

Ով թամբեր է՝ զենքե՛ր կապեք,

Ով կապեր է՝ ելե՛ք, հեծե՛ք,

Չասեք Դավիթ գող-գող եկավ,

Գող- գող գընաց:

Սա ազնիվ, վեհ արարք է, բարոյական ապտակ: Սա է մեծ փիլիսոփա ու բարոյագետ ժողովրդի հայացքը անարդարացի պատերազմների վերաբերյալ. քնած թշնամու, արգելափակված գազանի վրա անգամ չպետք է «գող-գող» հարձակվել: Սա խոսում է հերոսի առաքինության մասին: Մյուս հերոսը՝ Մելիքը, լրիվ Դավթի հակապատկերն է: Նա վախկոտ է ու սնապարծ, կեղծավոր ու շողոքորթ, զուրկ է պատվասիրությունից, խախտում է մենամարտի փոխադարձ պայմանները: Հայտնվում է այն հորում, որի մեջ խարդախությամբ գցել էր Դավթին: Այստեղ տեղին է հիշել Շեքսպիրի հերոսներից մեկի խոսքերը. «Նախքան իր մահը երկչոտը բազում անգամ է մեռնում, իսկ խիզախ մարդը՝ միայն մեկ անգամ»: Այստեղ խոսում է ժողովրդի իմաստությունը. «Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը»:

Քաջ Դավթի հերոսությունների համբավը տարածվում է հեռուներում և հասնում Խանդութ խանումին: Հաղթելով Խանդութի բոլոր փեսացուներին՝ Դավիթը Խանդութի հետ վերադառնում է Սասուն և ամուսնանում: Դավիթը տարիներ առաջ սիրահարվել էր Չմշկիկ Սուլթանին և խոստացել էր վերադառնալ յոթ օրից, բայց վերադառնում է յոթ տարի անց: Այդ ընթացքում Չմշկիկ Սուլթանը ունենում է մի աղջիկ /հայրը չէր տեսել նրան/, որն իր մորը հասցրած անարգանքից վիրավորված՝ սպանում է հորը՝ Դավթին: Այստեղ երևում է Դավթի անպատասխանատվությունը, չի կատարում խոստումը, որը և դառնում է մահվան պատճառ: Իսկ Խանդութը չի ուզում ապրել առանց սիրած ամուսնու և ինքնասպան է լինում: Մենք տեսնում ենք այս ճյուղում բոլոր մարդկային թուլությունները, որանք հատուկ են ժողովրդին: Այս ճյուղը դյուցազնավեպի կենտրոնն է, մարմնավորում է արաբների դեմ պայքարի պատմական հիշողությունը: Դավիթը բանագիտության մեջ համարվել է Դավիթ Բագրատունին, որի պայքարը արաբների դեմ զրույցների աղբյուր է դարձել: Դավիթը կռվում է անհրաժեշտությունից ելնելով:

Այստեղ Թուր Կեծակին ինքն է բարձրանում ՝ սրով եկողների, սուր բարձրացնողների դեմ: Ժողովուրդը Դավթի ձեռքերով քանդում է պարիսպը, ազատ արձակում կենդանիներին, ջնջում այն սահմանները, որոնք զրկում են իրենց հողից, ջրից, որս անելու հնարավորությունից:

Դավիթը լսում և հարգում է թշնամու բանակի «հալևորին»՝ որպես աշխատավոր ժողովրդի: Նա, սպանելով բռնակալ Մելիքին, ազատություն է տալիս բռնությամբ պատերազմի դաշտ քշված Մըսրա ժողովրդին.

Ուր դեխեն եկել եք , կնացեք ձեր դեխեր.

Ելեք, կնացեք ձեր տներ, ռըհաթ նստեք:

Սասնա դյուցազուններն իրենց հզորությունը խոնարհում են մոր առաջ, անգամ ՝ թշնամու մոր առաջ: Էպոսում պառավը մոր նման համակ սեր է, հողի նման բարի, ժողովրդի նման՝ ամենատես:

Նա կարող է անգամ հայհոյել, բռունցքով հարվածել մայրաբար, բայց Դավիթը չի նեղանում մեծից, այլ խոնարհաբար լսում է:

Չենք կարող խոսել հայրենասիրությունից ու չհիշատակել Զենով Հովհանին, Քեռի Թորոսին: Զենով Հովհանը նահապետն է դյուցազնական ընտանիքի և մտահոգված է իր երկրի ապագայով: Նրա երազը հայ ժողովրդի երազն է՝ իր հայրենիքի լուսավոր վաղվա մասին: Գալիս է Դավիթը Մըսրից, գալիս է հայրենիքի ուժն ու հզորությունը, պատիվն ու ինքնությունը, արդարության Թուր Կեծակին բարձրացնողը: Կյանքի բազում փոթորիկներով իմաստնացած ու առնականացած Հովհանը ավելի հեռուն է դիտում, ուղեկցում կյանքում էպոսի հերոսներին: Նա մեծացնում է Սասնա դյուցազուններին, մտահոգվում որբ Դավթի կյանքի հանգամանքներով, հետևում, խորհուրդներ տալիս Փոքր Միհրին: Նա նման է այն արծվին, որ իր ձագերին խնամում է մինչև թռցնելը, մինչև թևերի ամրանալը: Նույնն է անում նաև Քեռի Թորոսը: Այս կերպարների մեջ յուրովի է դրսևորվում հայրենասիրությունը՝ պահել, պաշտպանել այն ամենը, ինչ կապված է հայրենիքի հետ:

Հայրենիքի սերը հզոր է, քան մահվան զգացումը, քան մահը, ահա էպոսի ամեն տողից բխող գաղափարը: Թշնամին ավերել է հայրենի քաղաքը, ոչ մի կենդանի շունչ չի մնացել, միայն մի ծեր կին քաղաքի մի անկյունում կրակ է վառել: Այն հարցին, թե ինչու

է վառում, ոչ ոք չկա շուրջը, նա պատասխանում է. «Անոր համար ,որ...չըսեն, թե այնպես ավերեցինք Ախլաթ, որ այլևս մի տեղե իսկ ծուխ չպիտի ելնե»: Սա հայրենիքի կենդանության, հավերժության փիլիսոփայությունն է, հայրենիքի պատվի զգացումը: Սա խոսում է այն մասին, որ հայը բնավ հուսահատվել չգիտի:

Սակայն էպոսի կառուցվածքի պատճառով, այն պատճառով, որ Դավթի կերպարը մարմնավորում է հայ ժողովրդի բոլոր իդեալները, այն պատճառով, որ այդ հերոսը պետք է մնա, ապրի, քանզի այլապես նրա հետ կմեռնի ամբողջ ժողովուրդը, հարուցվում է Դավթի որդու հարցը: Եվ ժողովուրդը նրան որդի է տալիս: Նա ունի պապի բնավորության գծերը:

Վերջին ճյուղը կոչվում է «Փոքր Միհր»: Փոքր Միհրը տիեզերական կերպար է, որը թափառելով երկրից երկիր , փորձում է գտնել արդարություն ու ազատություն, բայց իզուր: Նա կռվում է Կոզբադնի չորս թոռների, Չմշկիկ Սուլթանի ու նրա զորքի դեմ՝ հանելով հոր վրեժը: Ի տարբերություն Դավթի՝ Միհրին տանջողը աշխարհում գոյություն ունեցող անարդար կարգերն են, որին նա փորձում է դիմակայել իր հզոր կամքի ուժով: Նա ազատագրում է Բաղդադը, փրկում Հալեպը չարիքներից, մարտնչում հարկահանների դեմ և այլն: Բայց նրա մարդասիրությունը անկարող է սրբել չարությունը երկրից ,և նա, որ անիծվել էր հոր կողմից՝ մնալով անմահ և անժառանգ, այցելում է հոր գերեզմանին, դժգոհում նրան այս ամենից և փակվում ժայռի մեջ: Ասում են՝ ամեն տարի Վարդավառին նա դուրս է գալիս Վանա լճի մոտ գտնվող Ագռավու քարից, որպեսզի պարզի՝ փոխվե՞լ է արդյոք աշխարհը: Եվ համոզվելով, որ ամեն ինչ մնում է նույնը, վերադառնում է քարայրը: Միհրը միայնակ հերոս է և իր խորհրդավոր վախճանով հիշեցնում է Մասիսում փակված Արտավազդին: Փոքր Միհրը պատժում է հայրենիքի դավաճան վանականներին և վանքը վերանվանում Մատնավանք: Ժողովուրդը անիծում է տաճարը, անիծում այն մարդուն, որ այն կկոչի աստծո տուն: Այստեղ քննադատության սուր սայրը ուղղվում է հոգևորականության դեմ: Փոքր Միհրը դառնում է ավելի տիեզերական կերպար՝ «աշխարհի բախտը դարձնող»: Ագռավու Քարում փակվելը մարդու կաշկանդված ազատության մարմնացումն է: Նրա կերպարի մեջ կան 2 կողմեր. մեկը՝ ծաղկող, լուսաշող և կենսալից արևի գծերն արտացոլող պապի, և մյուսը՝ հոգնած արևի, իրիկվա արևի, մայր մտնող արևի գծերն արտացոլող թոռան կերպարը: Միհրի կերպարում տեսնում ենք ժողովրդի իմաստուն ոգին, տևական պայքարով և անասելի դառնությամբ լի իր պատմությունը, իր ապրելու և

հավերժելու հավատը: Ապագայի նկատմամբ հավատն է, որ փրկում է հայ ժողովրդին կործանումից: Միերի անմահությունն էլ մի վերջ ունի, նա պիտի դուրս գա իր քարայրից և «շատ արյունք» թափի ու հայ ազգի ազատագրության համար նահատակվի: Հայրենիքի նկատմամբ ունեցած սերը մահն անգամ չի կարող խզել: Գոհարը, որի մահը վրա է հասնում Միերի բացակայության ժամանակ, կտակում է՝ իր աճյունը չթողնել օտար հողում, այլ տեղափոխել Սասուն և թաղել Խանդութի կողքին:

Փոքր Միերի կերպարում անմահությունն ու անժառանգ լինելը փոխադարձաբար պայմանավորված են: Ագռավու Քարը բարոյական քաղաքակրթական այն հիմնախնդրի առաջադրումն է, որի լուծմանն է նպակադրված Փոքր Միերը: Նա անմահ է, քանի որ մեղք չի գործել:

Փոքր Միերը, չկարողանալով իրական կյանքում գտնել անարդարություն ծնող աղբյուրը, բացահայտորեն դեմ է դուրս գալիս Աստծուն, մարտահրավեր է նետում և կռվում նրա ուղարկած հրեշտակների հետ: Ժայռը չի դիմանում Միերի հարվածին, այն ճեղքվում է ու «չմեղավորցած» Միերը, զինված իր ձիով, ներս է մտնում. բանտվում է արդարությունը անարդար աշխարհում: Իսկ էպոսի կանայք գեղեցկության և քնքշության հետ մեկտեղ օժտված են նաև խիզախությամբ, մարտունակ են և լիովին համապատասխան են իրենց սիրեցյալ դյուցազուններին: Մեր ժողովուրդը չի ստորադասում կնոջը տղամարդուն: Խանդութի մասին գրվում է.

Առյուծն՝ առյուծ է, էղնի էգ թե որձ:

Եզրակացություն

Էպոսը, պատկերելով հայ ժողովրդի բուռն ատելությունը և արյունոտ պայքարը նրան ճնշող բռնակալների դեմ, եղել է նաև նրա դաստիարակը դարերի ընթացքում: Նա փրկել է հայ ժողովրդին այլասերումից և ապազգայնացումից, տվել է հումանիզմի և դեմոկրատիայի գաղափարներ, ժողովրդասիրության և համաշխարհային եղբայրության իդեալներ, հույս և հավատ, ազատ աշխարհ ստեղծելու պատրաստակամ զոհաբերություն: Էպոսը եղել է դաժան ժամանակների վեհ ներշնչարանը, ավանդությունների հին գանձարանը: Այստեղ նաև կռիվ է Աստծո դեմ՝ ճակատագրի դեմ, բռնության դեմ՝ հանուն բացարձակ ազատության, բացարձակ մարդու:

Իմ խորին համոզմամբ՝ մարդը կայացման երկար ճանապարհ է անցնում, իսկ անհատականություն է դառնում, երբ հոգով, ավիշով ու արմատներով կապվում է իր երկրի մշակույթին, ազգային կենսակերպին ու կենսաձևին: Աշխարհի յուրաքանչյուր ազգ ու ժողովուրդ երկրի ու երկնքի տարածության մեջ ստեղծում է իր հոգևոր դաշտը, արարում արժեքներ, որոնք ժամանակի ընթացքում դառնում են նաև համամարդկային:

Ազգային արժեքները գրավում են առանձնահատուկ տեղ մշակույթի ընդհանուր համակարգում: Յուրաքանչյուր ազգ առանձնանում է միայն իրեն հատուկ խառնվածքով, մտածողության տեսակով և աշխարհընկալմամբ: Նյութական և հոգևոր

արժեքների, մշակույթի զգացական և բանական տարրերի համախմբումը տվյալ ազգի հոգեկերտվածքն է, գաղափարավարքային առանձնատիպը, որ ազգը տարբերում է մյուս ազգերից: Արժեքները արմատավորվում են տվյալ հանրության, ազգի մեջ հազարամյակների ընթացքում:

Լեզուն կարևորագույն ազգային արժեք է, առանց լեզվի չկա ազգ: Կարևոր ազգային արժեք և ազգային միասնության կարևոր գործոն է նաև ընտանիքը՝ ծնողները, երեխաները, պապն ու տատը, նրանց համատեղ կյանքը: Ֆրանսիայի հանրահայտ կինոռեժիսոր, ծագումով հայ Անրի Վերնոյի «Մայրիկ» վեպում կարդում ենք. «Գլխիս մեջ ղողանջեցին մեր եկեղեցիների զանգերը՝ ինձ հիշեցնելով մեր արմատները, մեր ծագումը, մեր ավանդույթները: Ես հայ եմ, մեզ մոտ մայրերը մեռնում են տանը: Ընտանիքում ես սովորեցի ցավ զգալ /ֆիզիկական ցավ/, ինչը նույն պահին զգում էր մյուսը»:

Հայաստանը կարողացել է պահպանել իր հոգևոր իրական հարստությունը՝ կրոնը, մշակույթը, դարերից եկած ազգային ավանդույթները, որոնց հայերս խիստ հետևում ենք ինչպես ուրախության, այնպես էլ տխրության պահերին: Այսօր հաստատուն պահպանվում են այնպիսի արժեքներ, ինչպիսին են ընտանիքի կայունությունը, հարգանքը մեծահասակների նկատմամբ, բարեկամական կապերի ամրությունը, հյուրընկալությունը, ինչպես նաև հարևաններին ու բարեկամներին օգնության հասնելու պատրաստակամությունը:

Աճող սերնդի ազգային –հոգևոր գիտակցության դաստիարակության խնդիրը դառնում է ազգայնացման գործընթացի գերակա ուղղություն՝ իհարկե, առանց կտրվելու համամարդկային և ազգային արժեքներից: Կարևոր է ազգային գիտակցության ձևավորումը, սեփական ժողովրդի պատմության և մշակույթի նկատմամբ հարգանքի և պատասխանատվության զգացման մշակումը: Կարևոր է դաստիարակության գործում նաև կրոնի դերը: Սովորողների ուշադրությունը պետք է հրավիրել քրիստոնեական պատվիրաններին: Պատվիրանները բարոյական դասեր են տալիս , ձևավորում են հոգևոր բարձր հատկանիշներ:

Բարոյական դաստիարակություն իրականացնելիս մենք սովորողին կողմնորոշում ենք դեպի գեղեցիկի ու տգեղի, չարի ու բարու, ազնվության, արդարության ու խաբեության և այլ որակների գիտակցմանը՝ փորձելով նրանց սովորեցնել տարբերել

ճշմարիտը կեղծիքից, դրականը բացասականից: Երբեմն սերունդը մոլորվում է: Եվ այդ մոլորության մշուշի մեջ լույսի ճրագը պետք է վառեն ծնողը, ուսուցիչը՝ իրենց կշռադատված, ճշգրիտ ցուցումներով, նրանց մոտ բարոյական արժեքներ ձևավորելով:

Հայրենիքը մեծագույն արժեք է, իսկ հայրենասիրությունը՝ սրբազան զգացմունք: Աշխատասեր ու արարող մի ժողովուրդ, որ քարից հաց է ստեղծել, միևնույն ժամանակ իր սկզբնավորման օրից ի վեր, արյուն-քրտինք թափելով, պաշտպանել այդ քարե հողակտորը: Եթե սիրում ես հայրենիքդ, նշանակում է՝ սիրում ես քեզ սնող ու պահող հողը, ծարավդ հագեցնող ջուրը: Փոքրիկ մի տարածք, բայց լցված ավանդույթներով, մշակույթով, սովորույթներով ու կենցաղով, որը կյանք է տալիս անգամ քարին: Հայրենասերը նա է, ով կարողանում է զատել վատը, սուտը և կեղծիքը, գնահատում է լավը և դառնում հայրենասեր: Հայրենիքը սիրողը սիրում է ընտանիքը, գերդաստանը, նրանց շեն ապրելու համար կյանքի գնով պաշտպանում է երկիրը, ազգը, ազգային նկարագիրը: Հայրենասիրությունը ծնեց Մայիսյան հերոսամարտերը, Սարդարապատի հերոսամարտը, Առաջին Հանրապետությունը: Հայաստանի կյանքը գոյության պայքար է, պետք է հպարտանալ երիտասարդության կամքի ահռելի մեծ ուժով, խելացի, քաջ ու անձնազոհ սերնդով: Քաջերից են Մոնթեն, Լեոնիդը, Թաթուլը, Վազգեն Սարգսյանը....

Հայրենասիրությունը սկսվում է ընտանիքից, զարգանում և թևավորվում է դպրոցում, ծավալվում հայրենի հողում ու դառնում սրբազան մասունք ազգային արյան մեջ.: Դպրոցում օգնում են ծանոթանալ ազգի հերոսական անցյալին, ճանաչել նվիրյալ զավակներին, արժևորել, գտնել երկրի վառ ապագան կերտելու ամենապատասխանաու ուղին: Նժդեհն ասում է. «Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, կործանվում՝ դրա պակասի պատճառով...»:

Հայրենասիրության ինչպիսի՞ օրինակներ ունենք...

Արցախյան 44-օրյա պատերազմ... Մենք մղձավանջ ապրեցինք: Ցավոք, դարերի ընթացքում չենք սովորել դասեր քաղել պատմությունից, բայց էլի ուշ չէ, ժամանակն է սովորել: 44 օր չապրեցինք, ընկնող տղաների հետ կարծես մենք էլ ընկանք, բայց հասկացանք, որ մենք պիտի ապրենք, որ նրանց հիշատակն էլ ապրեցնենք: Նրանք չապրեցին, որ մենք ապրենք: Հազար տարի առաջ էլ նույնն էր. Մեծ Միերը կնոջ հետ

նահատակվեց, որ նոր արևևեր ծնվեն: 2020 թ. զոհվածների մահն էլ նման էր արևի մայրամուտի, որ հետո նոր արևևեր ծագեն...

Մի՞թե սա հայրենասիրության փայլուն դրսևորում չէ 21-րդ դարում: Այսքանից հետո ունե՞նք իրավունք հանձնվելու, չպայքարելու: Հպարտություն է հանուն հայրենիքի, ազատության համար մեռնելը, բայց ավելի մեծ հերոսություն է նրա համար ապրելը ու նրան ապրեցնելը՝ նրա համար աշխատելով, զարգացնելով, բարգավաճելով: Հիանալ կարելի է 44-օրյա պատերազմում 22-ամյա հերոս որդի կորցրած հոր խոսքերով, երբ ծննդատնից նոր ծնված զավակին է տուն բերում ու ասում.

—Զավակ ունեցա, որ տանս ծուխը չմարի....

Այո,՛ շատ մեծ է մեր էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում: Էպոսի հերոսները որքան խորն են սիրում իրենց հայրենիքը, նույնքան էլ խորն են ատում ազատության թշնամիներին: Ամբողջ այդ հերոսամարտը բոցավառված է հայրենասիրական կիզիչ հրով, որով ջերմացել են բազմաթիվ սերունդներ ու ցայսօր էլ նույն ուժով ատելու, հետևաբար և սիրելու գիտություն է տալիս իր իր ստեղծագործ ժողովրդին: Անշուշտ, պիտի ապրի Հայաստանը, պիտի ապրի նրա հերոս ժողովուրդը:

Ի վերջո, բարոյական արժեքները կազմում են մարդու արժեհամակարգի կարևորագույն մասը: Այսօրվա խնդիր է հայեցի դաստիարակությունը: Կերտել այնպիսի քաղաքացի, որն օժտված լինի բարոյական բարձր որակներով, գիտելիքների հարուստ զինանոց ունենա, գիտակցի, որ իր նպատակը շեն հայրենիք ստեղծելն է ու լիարժեք հայ լինելը, հասկանա, որ իր տեղը հայրենիքում է: Իսկ երբ հայը հեռանում է հայրենիքից, նա դադարում է կարոտել, հեռանում է մայրենի լեզվից, հավատից, ազգային ոգուց, ազգային հիշողությունից, ավանդույթից, մոռանում իր ծագումնաբանությունը, քարտեզի վրա դժվարությամբ է գտնում Արարատի տեղը, դադարում է հայ լինելուց:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինը գրել է. «Մենք գիտակցում ենք, որ հայեցի Հայաստանով է պայմանավորված մեր պետականության և համայն աշխարհում սփռված հայության գոյությունը: Քրիստոնեական հավատքի, մայրենի լեզվի և սրբազան ավանդույթների անխաթար պահպանումը կլինի հզոր կռվան, ուժ և երաշխիք մեր տեսակի ու հայոց նորանկախ պետականության պահպանման»:

Գրականություն

1. Գր. Գրիգորյան—Հայ ժողովրդական բանահյուսություն
2. Սրբուհի Հայրապետյան—Հայոց հին և միջնադարյան գրականության պատմություն
3. Մ. Աբեղյան---Հայկական հերոսական էպոսը